

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊԶԲ-24/13 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Ուղղահայաց շերտավարագույր՝ առավելագույնը 3500քմ, վերևի քիվը այլումինե պրոֆիլով՝ չափսը՝ լայնություն՝ 4.0-4.8սմ x բարձրություն՝ 2.5-3.0սմ: Աշխատացնող մեխանիզմները պլաստմասե: Գործվածքը պոլիմերային նյութով տոգորված՝ լայնքը 9-13սմ: Ներքևի ծանրոցները պլաստմասե՝ 9-13սմ լայնքով: Ներքևի շղթան և աշխատացնող շղթան պլաստմասե: Գույնը՝ բաց ծիրանագույն: Ուղղահայաց շերտավարագույրները պետք է լինեն չօգտագործված:</p> <p>Ուղղահայաց շերտավարագույրների առնվազն 30% տեղադրվելու է Երևան քաղաքում: Ուղղահայաց շերտավարագույրների նախօրոք չափագրումը, տեղափոխումը, հնի ապամոնտաժումը (եթե այդպիսիք կան), նորի տեղադրումը (ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ բոլոր դետալները և նյութերը) պետք է իրականացվեն Վաճառողի կողմից: Ուղղահայաց շերտավարագույրները պետք է պատրաստվեն Գնորդի կողմից տրամադրվող պատվերի հայտերի հիման վրա: Գնորդից բանավոր կամ թղթային կամ էլեկտրոնային եղանակով պատվերի հայտը ստանալու օրվանից հետո՝ Երևան քաղաքում՝ 4 օրացուցային օրվա ընթացքում, ՀՀ մարզերում՝ 6 օրացուցային օրվա ընթացքում Վաճառողը պարտավոր է այցելել Գնորդի կողմից նշված հասցեներ, կատարել համապատասխան չափագրումներ և չափագրման արդյունքները ներկայացնել Գնորդի հաստատմանը: Պատվերը ձևավորված է համարվում Գնորդի կողմից հաստատված չափագրման արդյունքների մասին Վաճառողին բանավոր կամ թղթային կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնելու օրը: Յուրաքանչյուր պատվերի համար կատարման ժամկետ է սահմանվում պատվերի ձևավորմանը հաջորդող օրվանից հաշված 25 օրացուցային օր, իսկ այդ պատվերի ամբողջական կատարումը ներառում է ուղղահայաց շերտավարագույրների պատրաստումը, տեղափոխումը և</p>

տեղադրումը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

УСЛГРУЦЛЪ УПС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 77-ЕЦХЦП2Р-24/13 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	